ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Ա. ԱՆՏՈՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Անտոնյան.**

Ի պատասխան Ձեր 05.03.2020թ. հ.02/052 գրության՝ տեղեկացվում է, որ Նանսենի փողոցի հ.9 շենքի 2-րդ մուտքի վերելակներից 1-ինն սպասարկվում և շահագործվում է «Նոր Նորք վերելակ» ՍՊԸ-ի կողմից՝ համաձայն «Նոր Նորք 1/7» համատիրության հետ կնքված պայմանագրի: «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կատարվել է վտանգավոր օբյեկտի տեխնիկական անվտանգության փորձաքննություն և այն համապատասխանում է «Վերելակների և դրանց շահագործման անվտանգության պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 09.02.2006թ. հ.692-Ն որոշման պահանջներին և տրվել է դրական եզրակացություն: Նոր Նորք վարչական շրջանի 2020թ. վերելակների պահեստամասերի ձեռքբերման ծրագրի շրջանակներում կկատարվեն 1-ին վերելակի նորոգման աշխատանքները:

Նշված շենքի 2-րդ վերելակը ենթարկվել է վերանորոգման և գտնվում է սարքին վիճակում: Հետագա սպասարկման և շահագործման նպատակով անհրաժեշտ է 2-րդ վերելակի համար վճարումներ կատարելու բնակիչների պատրաստակամությունը, որից հետո պետք է պայմանագիր կնքել որևէ լիցենզավորված կազմակերպության հետ, անցկացնել վտանգավոր օբյեկտի տեխնիկական անվտանգության փորձաքննություն և դրական եզրակացության առկայության դեպքում վերելակը կգործարկվի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ